Ընդհանուր դրույթներ և պայմաններ

Ներածական մաս

Սույն Ընդհանուր դրույթները և պայմանները (այսուհետ՝ «Պայմաններ») սահմանում են «ԴԻԻՄ ՔՈՄՅՈՒՆԻՔԵՅՇՆԶ» ՍՊԸ–ի (այսուհետ՝ «Կազմակերպիչ») կազմակերպած Snickers® ապրանքանիշի վաճառքի խթանման ակցիայի (այսուհետ՝ «Ակցիա») մասնակցության կանոնները և կարգը: Ակցիայի ժամկետներն են 2026 թվականի մայիսի 17-ը ժամը 00:00–ից մինչև 2026 թվականի հուլիսի 25-ը ժամը 23:59 ներառյալ, և այն գործում է Հայաստանի Հանրապետության ամբողջ տարածքում:

1. Սահմանումներ

1.1. Ակցիա՝ սույն Պայմաններով սահմանված գործողությունների ամբողջություն, որի արդյունքում մասնակիցը ստանում է մրցանակ շահելու հնարավորություն:

1.2. Խաղարկություն՝ Ակցիայի շրջանակներում իրականացվող գործընթաց, որի արդյունքում պատահականության սկզբունքով ընտրվում են Հաղթողները:

1.3. Ակցիայի կազմակերպիչ՝ «ԴԻԻՄ ՔՈՄՅՈՒՆԻՔԵՅՇՆԶ» ՍՊԸ:

1.4. Մասնակից՝ Հայաստանի Հանրապետության 18 տարին լրացած գործունակ ֆիզիկական անձ, որը ունի բջջային հեռախոսահամար, իր սեփական նախաձեռնությամբ կատարել է սույն Պայմաններով նախատեսված բոլոր անհրաժեշտ գործողությունները (Snickers® ապրանքներ գնելը, առցանց գրանցվելը և կոդ սկանավորելը) և համապատասխանում է մասնակցության պայմաններին:

1.5. Կոդ ՝ Snickers® ապրանքի փաթեթավորման վրա տպագրված եզակի կոդ, որը որևէ մեկ մասնակիցին տալիս է մեկ մասնակցության իրավունք:

1.6. Կայք՝ Ակցիայի իրականացման համար նախատեսված https://snickersni-promo.com ինտերնետային կայքը:

1.7. Մրցանակ՝ Ակցիայի շրջանակներում տրամադրվող նվերը, որը ներկայացված է սպորտային խանութների նվեր-սերտիֆիկատների տեսքով: Մրցանակի դրամական համարժեքի փոխանակումը, ինչպես նաև փոխանակման/տրամադրության այլ ձևով կիրառումը բացառվում է:

1.8. Ապրանք՝ «Snickers®» ապրանքանիշի շոկոլադե բատոններ (50 գ և 80 գ), որոնց փաթեթավորման վրա առկա են սույն Ակցիային մասնակցության համար նախատեսված հատուկ նշումները։

1.9. Հաղթող՝ Մասնակից, որը Ակցիայի շրջանակներում իրականացվող խաղարկության արդյունքում ընտրվել է պատահականության սկզբունքով և ձեռք է բերել Մրցանակ ստանալու իրավունք։

2. Մասնակցության կարգ

2.1. Մասնակցության համար մասնակիցը պարտավոր է.

- ձեռք բերել **Snickers®** ակցիոն ապրանք (ինչպես 50 գ, այնպես էլ 80 գ փաթեթավորմամբ, որոնց վրա առկա են հետևյալ հատուկ նշումները՝ «PENALTY», «HAND BALL», «OWN GOAL», «FOOOUL», «VAAAAR», «OFFSIDE», «CORNER», «GOAAAAL», «RED CARD»,);
- գրանցվել Ակցիայի պաշտոնական կայքում;
- սկանավորել անմիջապես ձեռք բերված ապրանքի փաթեթավորման վրա տպագրված եզակի կոդը։

2.2. Յուրաքանչյուր եզակի կոդ ապահովում է մեկ մասնակցության հնարավորություն։ Կոդերի օգտագործման քանակը սահմանափակված չէ։

2.3. Մրցանակների խաղարկությունները իրականացվում են յուրաքանչյուր շաբաթ՝ պատահականության սկզբունքով։

2.4. Մեկ Մասնակիցը կարող է շահել առավելագույնը մեկ մրցանակ յուրաքանչյուր շաբաթվա ընթացքում։

2.5. Մրցանակների խաղարկությունները անցկացվում են հետևյալ օրերին՝
18 մայիսի 2026
25 մայիսի 2026
1 հունիսի 2026
8 հունիսի 2026
15 հունիսի 2026
22 հունիսի 2026
29 հունիսի 2026
6 հուլիսի 2026
13 հուլիսի 2026

20 հուլիսի 2026
27 հուլիսի 2026:

2.6. *Վերջին խաղարկությանը մասնակցում են մինչև 2026 թվականի հուլիսի 25-ը ժամը 23:59-ը ներառյալ մուտքագրված կոդերով բոլոր գրանցված հայտերը:

2.7. Յուրաքանչյուր շաբաթվա խաղարկությանը մասնակցած և չշահած կոդերը չեն մասնակցում հաջորդ շաբաթվա խաղարկություններին:

2.8. Կազմակերպիչը իրավունք ունի իրականացնել լրացուցիչ ստուգումներ՝ Մասնակցի կողմից տրամադրված տվյալների, կոդերի վավերականության և սույն Պայմաններին համապատասխանության վերաբերյալ, ինչպես նաև անհրաժեշտության դեպքում պահանջել լրացուցիչ տեղեկություններ կամ հաստատումներ:

2.9. Խախտումների, չարաշահումների կամ դրանց վերաբերյալ հիմնավոր կասկածի դեպքում Կազմակերպիչը իրավունք ունի մերժել Մասնակցի մասնակցությունը կամ զրկել նրան մրցանակ ստանալու իրավունքից:

2.10. Սույն Պայմանների պահանջներին չհամապատասխանելու դեպքում Մասնակիցը կորցնում է Ակցիային մասնակցելու և/կամ մրցանակ ստանալու իրավունքը:

3. Հաղթողների ծանուցում և մրցանակի ստացում

3.1. Հաղթողները հրապարակվում են Ակցիայի պաշտոնական կայքում՝ «Հաղթողներ» բաժնում, ինչպես նաև Մասնակցի անձնական էջում:

3.2. Հաղթող ընտրվելը հաստատվելուց հետո Կազմակերպիչը կապ կհաստատի հաղթողի հետ՝ մրցանակային խաղարկությունից հետո հաջորդող 5 աշխատանքային օրվա ընթացքում՝ Մասնակցի գրանցման ժամանակ նշված հեռախոսահամարի միջոցով:

3.3. Եթե նշված ժամկետում հաղթողի հետ հնարավոր չէ կապ հաստատել կամ հաղթողը չի արձագանքում, Կազմակերպիչը պահպանում է իրավունք չտրամադրել մրցանակը և իրականացնել լրացուցիչ խաղարկություն:

3.4. Մրցանակի փոխանցման եղանակը համաձայնեցվում է հաղթողի հետ առանձին:

3.5. Եթե հաղթողը գտնվում է Երևան քաղաքում, մրցանակը կարող է տրամադրվել առաքման միջոցով՝ Կազմակերպչի կողմից ընտրված եղանակով:

3.6. Եթե հաղթողը գտնվում է Երևան քաղաքից դուրս, մրցանակի ստացումը իրականացվում է Կազմակերպչի կողմից նշված վայրում ինքնուրույն ներկայանալու միջոցով կամ առաքման միջոցով՝ հաղթողի հաշվին:

3.7. Կազմակերպիչը չի կրում պատասխանատվություն առաքման ընթացքում առաջացած ուշացումների, վնասների կամ երրորդ անձանց գործողությունների համար:

3.8. Սույն Պայմանների պահանջներին չհամապատասխանելու դեպքում Կազմակերպիչը իրավունք ունի միակողմանի մերժել մրցանակի տրամադրումը:

3.9. Մրցանակը որևէ այլակողմանի փոխանակման (դրամական կամ նյութական համարժեք) չի ենթակա և փոխանցվում է միայն համապատասխան հաղթողին:

4. Գաղտնիություն և անձնական տվյալների պաշտպանություն

4.1. Օգտվելով Կայքից և մասնակցելով Ակցիային՝ Դուք հաստատում եք, որ հանդիսանում եք Snickers® ապրանքների սպառող և Ակցիայի մասնակից: Դուք հասկանում և ընդունում եք Ձեր անձնական տվյալների մշակման՝ սույն Պայմաններով նախատեսված դրույթներն ու նպատակները, ինչպես նաև այն, որ դրանց մշակումը հիմք չի հանդիսանում Ձեզ որևէ վարձատրություն կամ հատուցում վճարելու համար:

Ընկերությունը պահպանում է մասնակիցների տվյալների գաղտնիությունը և պատշաճ միջոցներ է ձեռնարկում Ձեր կողմից տրամադրված անձնական տվյալները պաշտպանելու համար: Ակցիային մասնակցության պայմաններում նկարագրված են, թե ինչպիսի անձնական տվյալներ ենք մենք ստանում, ինչպես ենք դրանք օգտագործում և ում ենք տրամադրում:

Սույն Պայմանները չընդունելու դեպքում Դուք չեք կարող մասնակցել Ակցիային:

4.2. Մասնակցելով Ակցիային՝ Դուք համաձայնում եք, որ Ընկերությունը կօգտագործի և կմշակի Ձեր անձնական տվյալները Ակցիայի իրականացման նպատակներով և կկատարի «Անձնական տվյալների պաշտպանության մասին» Հայաստանի Հանրապետության օրենքով նախատեսված այլ գործողություններ:

Դուք հաստատում եք, որ Ձեր բոլոր անձնական տվյալները հուսալի են և ճշգրիտ, և հասկանում եք, որ պատասխանատվություն եք կրում ոչ ճշգրիտ տվյալներ տրամադրելու համար:

4.3. Մասնակցելով Ակցիային՝ Դուք հաստատում եք, որ Ձեր կամքով և անվճար տրամադրում եք համաձայնություն, որ Ձեր անձնական տվյալները (այդ թվում՝

անունը, ազգանունը և բջջային հեռախոսահամարը) մշակվեն Ընկերության տվյալների բազայում՝ հավաքվեն, գրանցվեն, պահպանվեն, թարմացվեն, օգտագործվեն և անհրաժեշտության դեպքում ջնջվեն։

Անձնական տվյալները կարող են օգտագործվել հետևյալ նպատակներով՝

4.3.1. Ակցիային մասնակցությունը կազմակերպելու և հաստատելու համար,

4.3.2. շուկայի ուսումնասիրության և վերլուծության նպատակով,

4.3.3. սպառողների փորձի բարելավման նպատակով,

4.3.4. ապրանքների և ծառայությունների զարգացման նպատակով։

4.4. Մասնակցելով Ակցիային՝ Դուք իրավունք եք տալիս մշակել Ձեր անձնական տվյալները նշված նպատակներով։ Որպես անձնական տվյալների սուբյեկտ՝ Դուք իրավունք ունեք՝

4.4.1. ծանոթանալ Ձեր վերաբերյալ մշակվող տվյալներին,

4.4.2. պահանջել դրանց ուղղում, թարմացում կամ ոչնչացում օրենքով սահմանված դեպքերում,

4.4.3. հետ կանչել Ձեր համաձայնությունը,

4.4.4. պահանջել դադարեցնել տվյալների մշակումը,

4.4.5. իրականացնել օրենքով սահմանված այլ իրավունքներ։

4.5. Ձեր համաձայնությունը հետ կանչելու դեպքում Ընկերությունը կձեռնարկի անհրաժեշտ միջոցներ՝ Ձեր տվյալների մշակումը դադարեցնելու և դրանք ջնջելու ուղղությամբ՝ ողջամիտ ժամկետում։

Անձնական տվյալների մշակման հետ կապված հարցերի դեպքում կարող եք դիմել՝ deem@deemcommunications.com:

5. Փոփոխություններ սույն պայմաններում

Կազմակերպիչը իրավունք ունի ցանկացած ժամանակ ամբողջովին կամ մասամբ փոփոխել կայքից օգտվելու պայմանները՝ դրա մասին տեղեկացնելով կայքից օգտվողներին։ Կազմակերպիչը ցանկացած պահի իրավունք ունի փոփոխել կամ դադարեցնել Ակցիան՝ առանց նախնական ծանուցման:

6. Եզրափակիչ դրույթներ

6.1 Ընկերությունն իրեն իրավունք է վերապահում մասնակցի համար արգելափակել խաղարկության մասնակցությունը եթե՝

6.1.1. Դուք այլևս չեք բավարարում Խաղարկության պահանջներին,

6.1.2. Ձեր կողմից տրամադրվել են սխալ կամ ոչ ճշգրիտ անձնական տվյալներ,

6.1.3. Դուք դիմել եք մեզ խաղարկության Ձեր հասանելիությունը դադարեցնելու հարցումով,

6.1.4. Դուք փորձել եք անհատականացված կոդ տրամադրել՝ Ընկերության տվյալների բազայում չներառված կոդերի ցանկից:

6.1.5. Ցանկացած այլ դեպքում՝ Ընկերության միակողմանի որոշմամբ:

Կազմակերպիչ ընկերություն՝

«ԴԻԻՄ ՔՈՄՅՈՒՆԻՔԵՅՇՆԶ» ՍՊԸ,

ՀՎՀՀ՝ 02582832

Գրանցման հասցե՝ ՀՀ, ք. Երևան, Սոսե փողոց 6 շենք

Գործունեության հասցե՝ ՀՀ, ք. Երևան, Սոսե փողոց 6 շենք